Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **կանոնադրության** 8.1. կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի նախագահի, Փաստաբանների պալատի խորհրդի անդամների և գործը նախապատրաստող անձանց թեկնածուներին (այսուհետ՝ թեկնածուներ) գրանցելու, ինչպես նաև ընդհանուր ժողովի կողմից Փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերի քվեարկությունները կազմակերպելու և քվեարկությունների (ընտրությունների) արդյունքներն ամփոփելու նպատակով Փաստաբանների պալատի խորհրդի կողմից կազմավորվում է Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ Հաշվիչ հանձնաժողով)՝ սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով՝ երեք տարի ժամկետով նշանակված ինն անդամից:*

ՀՀ փաստաբանների պալատի **կանոնադրության** 8.7. կետի համաձայն. *Հաշվիչ հանձնաժողովը՝*

1) սահմանում է քվեաթերթիկների, արձանագրությունների և ընտրական այլ փաստաթղթերի ձևերը, նմուշները, դրանց լրացման և պահպանման կարգը.

2) սահմանում է թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի օրինակելի ձևերը.

3) հաստատում է դիտորդների հավատարմագրման կարգը և հավատարմագրում է վերջիններիս.

4) կազմակերպում է թեկնածուների կենսագրական տվյալների հրապարակումը.

5) հաստատում է քվեատուփի նմուշը (չափսերը).

6) վերահսկողություն է իրականացնում ընտրության տարածքում սույն կանոնադրության պահանջների կատարման նկատմամբ.

7) կազմակերպում և ամփոփում է քվեարկության արդյունքները.

8) կազմում է քվեարկության արդյունքների արձանագրություն.

9) իրականացնում է սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի **13.10.2026թ. թիվ 19/15-Լ որոշմամբ** երեք տարի ժամկետով ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի անդամներ են նշանակվել հետևյալ փաստաբանները.

1. *Գևորգ Գրիշայի Գևորգյան՝ հաշվիչ հանձնաժողովի նախագահ,*
2. *Աշոտ Խլոյան՝ հաշվիչ հանձնաժողովի քարտուղար,*
3. *Գագիկ Մայիլյան՝ հաշվիչ հանձնաժողովի անդամ,*
4. *Կարինե Ղաշանգյան՝ հաշվիչ հանձնաժողովի անդամ,*
5. *Հովհաննես Եգորյան՝ հաշվիչ հանձնաժողովի անդամ,*
6. *Հեղինե Մանուկյան՝ հաշվիչ հանձնաժողովի անդամ,*
7. *Նազիկ Մալխասյան՝ հաշվիչ հանձնաժողովի անդամ,*
8. *Հասմիկ Թադևոսյան՝ հաշվիչ հանձնաժողովի անդամ,*
9. *Կատյա Գաբոյան՝հաշվիչ հանձնաժողովի անդամ:*

Հյուսիսային տեղամաս՝

1)Ադելինա Հակոբյան (արտոնագիր № 253)՝ տեղամասի պատասխանատու

2)Գայանե Հակոբյան (արտոնագիր № 1721)

3)Սերինե Մանասյան (արտոնագիր № 2549)

Հարավային տեղամաս՝

4)Լիանա Գրիգորյան (արտոնագիր № 2377) տեղամասի պատասխանատու

5)Ռուբեն Ղազարյան (արտոնագիր № 744)

6)Հրայր Խաչատրյան (արտոնագիր № 2260)